Հաստատված է
ԳՊՀ գիտական խորհրդի
2026թ. հունիսի 20-ի թիվ 11 նիստում

Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան
«20» հունիսի 2026թ.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԱՆՁՆԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՍԱՉԱՓԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ, ՄՇԱԿՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն ընթացակարգը սահմանում է Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) դիմորդների, ուսանողների, նրանց ծնողների, դասախոսների և այլ տարակարգերի աշխատակիցների (այսուհետ՝ Շահառուներ) անձնական և կենսաչափական տվյալների հավաքագրման, մշակման, պահպանման և հրապարակման կանոնները:
2. Սույն ընթացակարգի համար հիմք են հանդիսանում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ օրենք), Համալսարանի կանոնադրությունը, Շահառուների անձնական և կենսաչափական տվյալների հավաքագրման, մշակման, պահպանման և հրապարակման գործընթացներին վերաբերող նորմատիվ իրավական ակտերը:
3. Անձնական տվյալներ են ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն՝ անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրային տվյալները, հանրային ծառայության համարանիշը, հանրային ծառայության համարանիշի բացակայության մասին տեղեկանքի համարը, հասցեն, հեռախոսահամարը, ինչպես նաև առկայության դեպքում՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգի անապահովության սահմանային միավորը, սոցիալական անձնագրի համարանիշը, սոցիալական աջակցություն ստանալու վերաբերյալ այլ տեղեկատվությունը, հաշմանդամությանը կամ ֆունկցիոնալության գնահատմանը վերաբերող, առանց ծնողական խնամքի մնացած լինելու կամ դրան հավասարեցված կարգավիճակ ունենալու փաստը հավաստող, զինվորական ծառայությանն առնչվող, ամուսնացած լինելու փաստը հիմնավորող կամ ընտանեկան վիճակի մասին, անչափահաս երեխաներ ունենալու կամ որդեգրելու վերաբերյալ, քաղաքացիության, ՀՀ-ում կացության կարգավիճակ ունենալու վերաբերյալ, բռնի տեղահանված լինելու մասին, փախստականի կարգավիճակ ունենալու վերաբերյալ տեղեկատվությունը և

այլ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են կամ թույլ են տալիս՝ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնելու անձի ինքնությունը:

4. Կենսաչափական անձնական տվյալներ են անձի ֆիզիկական, ֆիզիոլոգիական և կենսաբանական առանձնահատկությունները բնութագրող տեղեկությունները՝ լուսանկար, տեսահսկման համակարգի տվյալներ, մատնահետքեր՝ անցագրային համակարգի համար:

II. Հիմնական սկզբունքները

5. Շահառուների տվյալների մշակումը իրականացվում է օրինական հիմունքներով, հստակորեն սահմանված նպատակներով, համաչափության սկզբունքով՝ օրենքի հիման վրա և միայն նպատակին հասնելու համար անհրաժեշտ նվազագույն ծավալով, տվյալների հավաստիությամբ:

6. Ցանկացած անձնական կամ կենսաչափական տվյալ հավաքագրվում է միայն տվյալ անձի գրավոր կամ էլեկտրոնային (հաստատված) համաձայնությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

7. Շահառուների կենսաչափական անձնական տվյալները կարող են մշակվել միայն սուբյեկտի համաձայնությամբ կամ այնպիսի նպատակներով (օրինակ՝ անվտանգության ապահովում), որոնք ուղղակիորեն նախատեսված են օրենքով կամ այլ ակտով:

8. Անձնական տվյալները հավաքագրելիս՝ Համալսարանը պարտավոր է անձին տեղեկացնել տվյալների հավաքագրման նպատակի, մշակող ստորաբաժանման և տվյալների պահպանման ժամկետների մասին:

III. Տվյալների պահպանումը և անվտանգության ապահովումը

9. Համալսարանը պարտավոր է կիրառել անվտանգության համապատասխան միջոցներ՝ տվյալները պատահական կորստից, անօրինական օգտագործումից, ոչնչացումից կամ փոփոխումից պաշտպանելու համար:

10. Թղթային կրիչները (անձնական գործեր, պայմանագրեր, այլ փաստաթղթեր) պահվում են հատուկ արխիվային պահարաններում՝ սահմանափակ հասանելիությամբ (միայն Համալսարանի արխիվի, մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի կամ այլ՝ այդ նպատակով լիազորված աշխատակիցների համար):

11. Էլեկտրոնային տվյալները (ներքին ցանցեր, բազաներ) պաշտպանվում են գաղտնաբառերով, տարբերակված մուտքի իրավունքով և հակավիրուսային ծրագրերով:

12. Տվյալները պահպանվում են այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է դրանց հավաքագրման նպատակներն իրականացնելու համար (Շահառուների ուսումնառության և աշխատանքի ողջ ընթացքում), կամ համաձայն ՀՀ արխիվային գործի մասին օրենսդրությամբ սահմանված պարտադիր ժամկետների:

13. Առանց Շահառուի համաձայնության արգելվում է հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ մշակելը, բացառությամբ, երբ տվյալի մշակումն ուղղակիորեն նախատեսված է օրենքով:

14. Անձնական տվյալների մշակումն անհապաղ դադարեցվում է, եթե վերացել են տվյալները մշակելու հիմքերը և նպատակը:

IV. Տվյալների փոխանցման և հրապարակման հիմունքները

15. Շահառուների անձնական տվյալների փոխանցումը երրորդ անձանց (ներառյալ պետական մարմիններին) թույլատրվում է միայն անձի համաձայնությամբ կամ օրենքով ուղղակիորեն նախատեսված հարցումների դեպքում (կրթության կառավարման լիազոր մարմին, Պետական եկամուտների կոմիտե, այլ):

16. Համալսարանի պաշտոնական կայքում կամ տեղեկատվական հարթակներում Շահառուների տվյալների (լուսանկարների, էլեկտրոնային հասցեների, կենսագրության) հրապարակումն իրականացվում է վերջիններիս նախնական համաձայնությամբ:

17. Բոլոր այն աշխատակիցները, ովքեր իրենց պարտականությունների բերումով առնչվում են անձնական տվյալներին, ստորագրում են գաղտնիության պահպանման պարտավորագիր:

V. Տվյալների սուբյեկտի իրավունքները, Համալսարանի պարտականությունները

18. Յուրաքանչյուր Շահառու իրավունք ունի.

1) ծանոթանալ իր անձնական տվյալներին և պահանջել դրանց պատճենը,

2) պահանջել ուղղել, թարմացնել կամ ջնջել իր տվյալները, եթե դրանք թերի են, հնացած կամ մշակվել են օրենքի խախտմամբ,

3) ցանկացած պահի հետ կանչել անձնական տվյալների մշակման իր համաձայնությունը:

19. Համալսարանը կրում է պարտականություն՝ սույն ընթացակարգին համապատասխան Շահառուների հետ կնքել անձնական և կենսաչափական տվյալների հավաքագրման, մշակման, պահպանման և հրապարակման մասին համաձայնագիր, որտեղ կնշվեն՝

1) տվյալների սուբյեկտների ազգանունը, անունը, հայրանունը,

2) անձնական տվյալների մշակման իրավական հիմքերը և նպատակը,

3) մշակման ենթակա անձնական տվյալների ցանկը,

4) անձնական տվյալների հետ կատարման ենթակա գործողությունների ցանկը, որոնց համար հայցվում է տվյալների սուբյեկտի համաձայնությունը,

5) այն անձանց հնարավոր շրջանակը, որոնց կարող են փոխանցվել անձնական տվյալները,

6) հայցվող համաձայնության գործողության ժամկետը, ինչպես նաև համաձայնությունը հետ կանչելու կարգը և դրա հետևանքները: